ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

թիվ 03- 80

«20» ապրիլի 2011թ

Լոռու մարզպետ

պարոն Ա. Քոչարյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու թիվ 10-Ն-14-Ա և քաղաքապետի թիվ 14-Ն որոշումները:

Թումանյանի քաղաքապետ / Լ. Զավարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«15» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 10-Ն

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համապատասխան.

Ընդունել՝ ի գիտություն Թումանյան համայնքի 2010թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | | | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|---|---|
| Արզումանյան | Աշխեն | Աշխարիբեկի | | | |
| Մարուքյան | Միհրան | Շաքարի | | | |
| Շահվերդյան | Սեյրան | Սուրիկի | | | |
| Խեչոյան | Սերուժան | Ռուզվելտի | | | |
| Գորգինյան | Ռոման | Վանիկի | | | |

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

Հավելված 1
Թումանյան համայնքի ավագանու
2011 թ 15. 04. - ի թիվ 10 - Ն որոշման

# ՀԱՂՈՐԴՈՒՄ
# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011թ-ի ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2011թ –ի առաջին եռամսյակում բյուջեն կատարվել է եկամուտների գծով՝ 93.1 %-ով, նախատեսված 7352.0 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 6843.0 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 1415.5 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 1056.5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 74.6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա ) նախատեսված 5786.5 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 5786.5 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100% : Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետ. բյուջեից ստացվող միջոցները նախատեսված էր 150.0 հազ. դրամ ,որը չի տրվել առաջին եռամսյակում :

## 1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի 2011թ-ի եկամուտները առաջին եռամսյակում նախատեսված էր 7352.0 հազ. դրամ,փաստացի մուտքերը կազմել են 6843.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 93.8 %: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 1415.5 հազ. դրամ, կատարվել է փաստացի մուտք 1056.5 հազ. դրամ կամ կատարմա ն տոկոսը՝ 74.6 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 5786.5 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100%: Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետ. բյուջեից ստացվող միջոցները նախատեսված էր 150.0 հազ. դրամ, որը չի տրվել առաջին եռամսյակում :

### 1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2011թ-ի առաջին եռամսյակում բյուջեով նախատեսված էր 183. 0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 130.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 71.4 %: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հողի հարկի կատարման տոկոսը նվազել է:

### 1.2 Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար առաջին եռամսյակում նախատեսված էր 50.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 58.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 116.2 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 350.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 419.3 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը 119.8 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

## 1.3 Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված էր 362.5 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 89.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 24.8 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է :

## 1.4 Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2011թ-ի առաջին եռամսյակում բյուջեով նախատեսված էր 620.0հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 358.7 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 57.8% որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

## 1.5 Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Այս եկամտատեսակը նախատեսված էր 5786.5 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %:

# 1. Վարչական բյուջեի ծախսերի կատարողականը

Վարչական բյուջեի ծախսերը 2011թ.-ի առաջին եռամսյակում բյուջեով նախատեսված էր 7352.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 5462.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 74.0 %:

## 1.1 Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2011թ.-ի առաջին եռամսյակում բյուջեով նախատեսված 5022.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3900.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 77.7 %:

* «Քաղաքացիական պաշտպանության» համար նախատեսվել էր 10.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել :

* Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը 2011թ-ի առաջին եռամսյակում բյուջեով նախատեսված էր գյուղատնտեսության համար 150.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:
* Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 130.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 100,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 76.9 % :

* Հանգստի, մշակույթի և սպորտի ծառայությունների գծով ծախսերը նախատեսված էր 40.0 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

* Կրթության և գիտության գծով ծախսերը նախատեսված 1780.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 1391.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 78.2 %, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 1660.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 1271.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝76.6 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների գծով ծախսերը նախատեսված 120.0 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տակոսը՝ 100.0 % :

* Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 100.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 70.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100.0%:

* Հիմնական խմբին չդասվող ծախսերը նախատեսված էր 120.0 հազ. դրամ, փաստացի ծախս չի կատարվել:

1.2.Ըստ տնտեսագիտական դասակարգման 2011 թ. առաջին եռամսյակում բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են՝

* Աշխատատանքի վարձատրության համար նախատեսված 5343.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս 4772.7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 89.3 %,այդ թվում՝

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 4325 .0 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս 3900.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 90.1 %:

բ) Պարտադիր սոց. ապահովագրական վճարները նախատեսված 1017.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է 872.7 հազ. դրամի ծախս կամ կատարման տոկոսը՝ 85.8 %:

* Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 2009.0 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 608.9 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 30.3 %,այդ թվում՝

ա) Սոցիալական նպաստներ և կենսաթոշակների գծով նախատեսված 100.0 հազ. դրամ, փաստացի ծախսի փոխարեն կատարվել է 70 ,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 70,0%:

բ) Այլ ծախսերը՝այդ թվում պահուստային միջոցները նախատեսված էր 120.0 հազ. դրամ ծախս, սակայն փաստացի ծախս կատարվել է 11.0հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 9.2 %:

2.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Թումանյան համայնքի 2011թ.-ի առաջին եռամսյակում ֆոնդային բյուջեով նախատեսված էր 929.5 հազ. դրամ ծախս, սակայն փաստացի ծախս չի կատարվել :

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Զավարյան/

Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ հաշվապահ՝ /Ա. Ամիրջանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«15» ապրիլի 2011թ. Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 11

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշման.

1.Հաստատել Թումանյանի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հովհաննեսի Զավարյան
Թումանյանի քաղաքապետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան
Թումանյանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հովհաննեսի Ռամազյան
Համայնքի ավագանու անդամ, Թումանյանի միջնակարգ դպրոցի ուսմասվար

_____//_____ Մերուժան Ռուզվելտի Խեչոյան
Համայնքի ավագանու անդամ, Թումանյանի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

_____//_____ Աշխեն Աշխարհբեկի Արզումանյան
Համայնքի ավագանու անդամ, Թումանյանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

_____//_____ Լարիսա Իվանյանի Կիլինկարովա
Թումանյան համայնքի միջնակարգ դպրոցի տնօրեն

_____//_____ Ստեփան Արտենի Վարոսյան
Թումանյան համայնքի առողջապահության կենտրոնի տնօրեն

_____//_____ Անուշ Սուրենի Ղալայան
ք. Ալավերդու մանկապարտեզ

_____//_____ Արմեն Կարլոսյայի Բայադյան
Թումանյանի սոցիալական ծառայության գլխավոր մասնագետ

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 2006թ. օգոստոսի 16-ի թիվ 26 որոշումը:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | | | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|---|---|
| Արզումանյան | Աշխեն | Աշխարհբեկի | | | |
| Մարության | Միհրան | Շաքարի | | | |
| Շահվերդյան | Սեյրան | Սուրիկի | | | |
| Խեչոյան | Մերուժան | Ռուզվելտի | | | |
| Գորգինյան | Ռոման | Վանիկի | | | |

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«15» ապրիլի 2011թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թիվ 12

## «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԻՎ 58, 22.03.2011Թ. ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. փետրվարի 4-ի «Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 1-Ն որոշումը և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության թիվ 58 գրությունը.

Թումանյան համայնքում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման և ծրագրի կայացմանը օժանդակելու համար «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությանը Թումանյան համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրել «Հանգիստ, մշակույթ և կրոն» /8.4.2./ դասակարգման համար 80.0 հազար դրամ ծախս Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին / հոդված 4819/՝ որպես նվիրատվություն:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ

| | | | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|---|---|
| Արզումանյան | Աշխեն | Աշխարհբեկի | [signature] | | |
| Մարության | Միհրան | Շաքարի | [signature] | | |
| Շահվերդյան | Սեյրան | Սուրիկի | [signature] | | |
| Խեչոյան | Սերուժան | Ռուզվելտի | [signature] | | |
| Գորգինյան | Ռոման | Վանիկի | [signature] | | |

Թումանյանի քաղաքապետ [signature] /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«15» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 13-Ն

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ղեկավարվելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի.

Թումանյան համայնքի 2011թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Պակասեցնել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից 1278.0 հազար դրամ, սահմանել այն 148.0 հազար դրամ:
2.Ավելացնել 1.6.1 դասակարգման՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 80.0 հազար դրամով՝ սահմանելով այն 230.0 հազար դրամ, այդ թվում՝
1)Մասնագիտական ծառայությունների համար նախատեսված ծախսերը /հոդված 4241/ ավելացնել 50.0 հազար դրամով, սահմանել այն 150.0 հազար դրամ.
2)Պարտադիր վճարների համար /հոդված 4823/ նախատեսել 30.0 հազար դրամ:
3.Պակասեցնել պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 600.0 հազար դրամ:
4.Պակասեցնել /Տնտեսական հարաբերություններ/ գյուղատնտեսության համար նախատեսված ծախսերը 600.0 հազար դրամով, այդ թվում՝
1)աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ /հոդված 4111/ 480.0 հազար դրամ,
2)սոցիալական ապահովության վճարներ /հոդված 4131/ 120.0 հազար դրամ:
5.Ավելացնել 8.4.2. դասակարգման՝ Հանգիստ, մշակույթի և կրոնի համար նախատեսված ծախսերը 80.0 հազար դրամով, այդ թվում՝
1)ավելացնել 80.0 հազար դրամ նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին /հոդված 4819/:
6.Պակասեցնել նախադպրոցական կրթության համար նախատեսված ծախսերը 4211.0 հազար դրամով, նախատեսել նշված գումարի ծախս ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների /հոդված 4637/ համար:
7.Պահուստային ֆոնդից պակասեցված 1118.0 հազար դրամը նախատեսել Սոցիալական պաշտպանություն 10.5.1. դասակարգման համար գործազրկության ծախս՝ որպես համայնքի կողմից կատարվող ներդրում

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | | | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|---|---|
| Արզումանյան | Աշխեն | Աշխարհբեկի | [signature] | | |
| Մարության | Միհրան | Շաքարի | [signature] | | |
| Շահվերդյան | Սեյրան | Սուրիկի | [signature] | | |
| Խեչոյան | Սերուժան | Ռուզվելտի | [signature] | | |
| Գորգինյան | Ռոման | Վանիկի | [signature] | | |

Թումանյանի քաղաքապետ [signature] /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«15» ապրիլի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ թիվ 14-Ա

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. փետրվարի 4-ի «Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 1-Ն որոշումը և Թումանյան քաղաքի բնակիչներ Աշոտ Արմենակի Զաքարյանի, Արա Մարտունի Մկրտչյանի, Շահեն Եդվարդի Մաքսոյանի դիմումները.

1.Թումանյանի քաղաքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեի /հոդված 4729/ Թումանյան քաղաքի ստորև բերված անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն.

1)Զաքարյան Աշոտ Արմենակի-30000 դրամ
2)Մկրտչյան Արա Մարտունի-30000 դրամ
3)Մաքսոյան Շահեն Եդվարդի- 20000 դրամ

2. Թումանյանի քաղաքապետարանի գանձապահ Անգին Ծատրինյանին լիազորել՝ Ալավերդու ՏԳԲ-ից ստանալու հատկացված դրամական օգնությունը:

| Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ | | | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|---|---|
| Արզումանյան | Աշխեն | Աշխարհբեկի | | | |
| Մարության | Միհրան | Շաքարի | | | |
| Շահվերդյան | Սեյրան | Սուրիկի | | | |
| Խեչյան | Մերուժան | Ռուզվելտի | | | |
| Գորգինյան | Ռոման | Վանիկի | | | |

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/